

(կազմված է 13 հունիսի 2018թ. և բաղկացած է 10 թերթից)

Տպագրված է ընդամենը 3 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՅՎԱԾ Է

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՇԱՔԵ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

հիմնադրելու մասին հիմնադրի

13 հունիսի 2018թ. 01 որոշմամբ

Հիմնադրամի տնօրենի ժ/պ՝

ԴԱՇՅԱՆ ՍԱՀԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ

ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ

" 27 " 06 2018թ.

զբանցման համար՝ 222.160.102.4963

ՀՎՀՀ՝ 00912516

Աշխատակից՝

Յ. Կակոբյան



«ՇԱՔԵ»

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

- 1.1. «ՇԱՔԵ» բարեգործական հիմնադրամը (այսուհետ՝ նաև Հիմնադրամ) կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է առողջապահական, բարեգործական, սոցիալական, կրթական, գիտական և այլ նպատակներ:
- 1.2. Հիմնադրամը գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենսդրության, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք), ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:
- 1.3. Հիմնադրամը գործում է օրինականության, կամավորության, ինքնակառավարման և հրապարակայնության սկզբունքներով:
- 1.4. Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Հիմնադրամը կարող է գործել Արցախի հանրապետությունում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:
- 1.5. Հիմնադրամի լրիվ անվանումն է՝ հայերեն՝ «ՇԱՔԵ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ռուսերեն՝ БЛАГОТВОРИТЕЛЬНЫЙ ФОНД «ШАКЕ» անգլերեն՝ «SHAKE» CHARITABLE FOUNDATION:
- 1.6. Հիմնադրամի հիմնադիրն է Սահակ Դաշյանը (ՀՀ քաղաքացի, անձնագիր՝ BA0429741, տրված՝ 29.03.2014 թ., 005 կողմից, բնակության վայրի հասցե՝ ք. Երևան, , Նոր Նորքի 9-րդ գնգ. ,Վիլյուսի փ. 172., 46 բն.)
- 1.7. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ 0059, ՀՀ, ք. Երևան, Նոր Նորքի 9-րդ գնգ., Վիլյուսի փ., 172., 46 բն.):

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ

- 2.1 Հիմնադրամի նպատակներն են՝
 - 2.1.1 Հայաստանի Հանրապետությունում հաշվառված շաքարային դիաբետով երեխաներին ֆինանսական աջակցություն տրամադրել ինսուլինային պոմպերի և հարակից պարագաների ձեռքբերման համար:
 - 2.1.2. Բարեգործական օժանդակություն ցուցաբերել Հայաստանի Հանրապետության մանկական ներգատաբանական ծառայություններ տրամադրող հաստատություններին դրամաշնորհների տրամադրման ձևով:
- 2.2 Հիմնադրամը իր կանոնադրական նպատակները իրականացնելու համար իրականացնում է դրանցից բխող ծրագրեր:
Կազմակերպում է մրցույթներ, կազմակերպում է սեմինար-քննարկումներ, դասընթացներ:
- 2.3 Հիմնադրամը համագործակցում է ինչպես ՀՀ պետական և ոչ պետական մարմինների, կազմակերպությունների և հաստատությունների, այնպես էլ արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների, ընկերությունների և հաստատությունների հետ:
- 2.4 Հիմնադրամի հնարավոր շահառուներն են՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության շաքարային դիաբետով մինչև 18 տարեկան երեխաները և մանկական ներգատաբանական ծառայություններ տրամադրող հաստատությունները:
- 2.5 Հիմնադրամի գործունեությունը անժամկետ է: Հիմնադրամի հիմնադիրը միանձնյա կարող է ընդունել որոշում դիմելու դատարան Հիմնադրամը Օրենքով սահմանված կարգով լուծարելու

մասին, եթե հիմնադրամի գույքը և միջոցները բավարար չեն նրա նպատակների և խնդիրների իրագործման համար, և եթե հնարավոր չէ հասնել հիմնադրամի նպատակներին:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԻՐԱՎՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 3.1. Հիմնադրամի իրավունակությունը ծագում է նրա պետական գրանցման պահից և դադարում է լուծարման գրանցման պահից:
- 3.2. Հիմնադրամը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ պետական գրանցման պահից:
- 3.3. Հիմնադրամն ունի ՀՀ օրենսդրությամբ իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ:
- 3.4. Հիմնադրամը՝ որպես սեփականություն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ և իր պարտավորությունների համար պատասխանատու է սեփական գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող, կարող է ունենալ իր անվամբ կլոր կնիք՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով, դրոշմ, հաշվարկային հաշիվներ բանկերում՝ թե ՀՀ արժույթով, և թե արտարժույթով: Կարող է անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին, հիմնադրել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներ, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, օրենքով սահմանված կարգով, կարող է ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար, կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, ինչպես անմիջականորեն, այնպես էլ ստեղծելով տնտեսական ընկերություններ կամ մասնակցելով դրանց: Հիմնադրամն իրավունք ունի զբաղվել միայն իր կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության տեսակներով, եթե Օրենքով սահմանված կարգով անմիջականորեն է իրականացնում ձեռնարկատիրական գործունեություն: Կարող է ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ, ակումբներ, հանձնաժողովներ և այլ կառույցներ, կարող է իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:
- 3.5. Հիմնադրամը քաղաքացիական իրավունքները ձեռք է բերում ու իրականացնում իր կամքով և ի շահ իրեն: Հիմնադրամն ազատ է պայմանագրի հիման վրա սահմանելու իր իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:
- 3.6. Հիմնադրամն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր քաղաքացիական իրավունքների պաշտպանության իրավունք:
- 3.7. Հիմնադրամը պարտավոր է՝ գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան, օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին, կրել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:
- 3.8. Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում պետության պարտավորությունների համար, ինչպես որ պետությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրամի պարտավորությունների համար:
- 3.9. Հիմնադրիրը պատասխանատու չէ իր կողմից ստեղծված հիմնադրամի պարտավորությունների,

իսկ հիմնադրամը՝ իր հիմնադրի պարտավորությունների համար:

3.10. Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

3.11. Հիմնադրամի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

4.1 Հիմնադրամի մարմիններն են՝ հոգաբարձուների խորհուրդը և տնօրենը:

4.2 Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է: Հոգաբարձուների խորհրդի կազմը սահմանվում է 5 հոգի: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները չեն կարող լինել հիմնադրամի այլ մարմնի անդամ:

4.3 Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը նշանակվում է հիմնադրի կողմից:

4.4. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահին ընտրում են հոգաբարձուների խորհրդի անդամները՝ խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ երկու տարի ժամկետով:

4.5 Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները, խորհրդի անդամի իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների համար կարող է սահմանվել փոխհատուցում նրանց այն ծախսերի համար, որոնք կապված են հոգաբարձուների խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է հոգաբարձուների խորհուրդը:

4.6 Հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը երեք տարի է: Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարել՝

1. Նրա գրավոր դիմումի հիման վրա.

2. Նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով.

3. Օրենքով սահմանված դեպքերում:

Հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում հիմնադիրը պետք է պատշաճ ձևով տեղեկացված լինի:

4.7 Հոգաբարձուների խորհրդի նոր անդամը նշանակվում է հիմնադրի կողմից՝ այդ մասին ծանուցում ստանալու օրվանից հետո 30 օրվա ընթացքում:

4.8 Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստերը հրավիրվում են եռամսյակը մեկ անգամ՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից, որը սահմանում է նաև նիստերի անցկացման ժամկետները: Նիստի օրակարգը բաժանվում է հոգաբարձուների խորհրդի անդամներին և հիմնադրին ոչ ուշ, քան նիստից 15 օր առաջ: Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև հիմնադրի կամ հոգաբարձուների խորհրդի անդամների 1/3 պահանջով՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացնելուց 10 օրվա ընթացքում: Եթե նշված ժամկետում հոգաբարձուների խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստը կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք: Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ:

4.9 Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի իրավասության հարցերն են՝

4.9.1. Հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը.

4.9.2. Հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

4.9.2. Հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը.

4.9.3. Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը.

4.9.4. Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.

4.9.5. Հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը.

4.9.6. Հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը.

4.9.7. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.

4.9.8. Հոգաբարձուների խորհրդի նախագահի, տնօրենի և կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը.

4.9.9. Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված այլ մարմինների ձևավորումը.

4.9.10. Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխություն, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը.

4.9.11. Տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման և դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը.

4.9.12. Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.

4.9.13. Տարեկան մեկ անգամ տնօրենի հաշվետվությունների լսումը.

4.9.14. Իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.

4.9.15. Հիմնադրամի աուդիտը իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը.

4.9.16. Հիմնադրամի կառուցվածքի հաստատումը.

4.9.17. Հիմնադրամի հաստիկացուցակի հաստատումը.

4.9.18. Օրենքով, հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացում.

4.10 Հոգաբարձուների խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը կանոնադրությամբ չեն կարող փոխանցվել այլ մարմնի.

4.11 Հոգաբարձուների խորհուրդն իրավունք ունի ծանոթանալու հիմնադրամի բոլոր փաստաթղթերին:

4.12 Հոգաբարձուների խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հոգաբարձուների խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում են հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին: Հոգաբարձուների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնադրությամբ սահմանված առանձին դեպքերի:

4.13 Հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրության և ազատման, Հիմնադրամի տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև Հիմնադրամի անվանման փոփոխության, լուծարման և կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության

հաստատման մասին որոշումներն ընդունվում են հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Հոգաբարձուների խորհուրդը հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշումներն ընդունում է հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:

4.14 Եթե հոգաբարձուների խորհրդի նիստում քննարկվում է հիմնադրամի խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա հոգաբարձուների խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

4.15 Հոգաբարձուների խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է իր կողմից հաստատված կանոնակարգի համաձայն:

4.16. Հոգաբարձուների խորհրդի նիստերում նրա յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

4.17 Խորհրդի նախագահը՝

կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի աշխատանքները,

գումարում է հոգաբարձուների խորհրդի նիստերը, նախագահում է դրանք, կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,

Հոգաբարձուների խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, կատարում է խորհրդի անդամներից մեկը:

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

5.1. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

5.2. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամն իրավունք ունի՝

հիմնադրամի աշխատանքները բարելավելու նպատակով ներկայացնել առաջարկություններ, սպառիչ տեղեկատվություն ստանալ հիմնադրամի գործունեության մասին, ազատ դուրս գալ հոգաբարձուների խորհրդի անդամությունից:

5.3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամը պարտավոր է՝ հոգ տանել հիմնադրամի հեղինակության բարձրացման համար, աջակցել հիմնադրամում ներդրումների համալրմանը:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆԸ

6.1. Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է հիմնադրամի տնօրենը (այսուհետ՝ Տնօրեն):

6.2. Տնօրենի իրավասությանն են պատկանում հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ օրենքով և կանոնադրությամբ հոգաբարձուների խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի: Հիմնադրամի տնօրենը կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի որոշումների կատարումը:

6.3. Տնօրենը նշանակվում և պաշտոնից ազատվում է հոգաբարձուների խորհրդի կողմից: Տնօրենին առաջին անգամ կարող է նշանակել հիմնադիրը: Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր: Հիմնադրամի անունից պայմանագիրը ստորագրում է հոգաբարձուների խորհրդի նախագահը կամ հոգաբարձուների խորհրդի կողմից լիազորված այլ անձ: Տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Օրենքով, հիմնադրամի կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով: Տնօրենի կողմից իր պարտականությունների հասարակական հիմունքներով կատարելու դեպքում նրա հետ աշխատանքային պայմանագիր չի կնքվում:

6.4. Տնօրենը՝

6.4.1. Տնօրինում է հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում հիմնադրամի անունից,

6.4.2. Ներկայացնում է հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

6.4.3. Գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր.

6.4.4. Մահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

6.4.5. Բանկերում բացում է հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.

6.4.6. Հոգաբարձուների խորհրդի հաստատման է ներկայացնում հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և կառուցվածքային մյուս մարմինների, հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

6.4.7. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

6.4.8. Մահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում հիմնադրամի աշխատակիցներին.

6.4.9. Աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

6.5. Հիմնադրամի տնօրենը այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն հոգաբարձուների խորհրդի համաձայնությամբ:

6.6. Հոգաբարձուների խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծարել տնօրենի հետ կնքված պայմանագիրը՝ օրենքով, հիմնադրամի կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով սահմանված կարգով:

7. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ, ՀԻՄՆԱԴՐՎՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

7.1. Հիմնադրամն իրավունք ունի օրենքին և իրավական այլ ակտերին համապատասխան ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ, ակումբներ, հանձնաժողովներ և այլ մարմիններ: Օտարերկրյա պետություններում առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումն իրականացվում է այդ երկրների օրենքներին և իրավական այլ ակտերին համապատասխան, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

7.2. Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի անվանումը պետք է պարունակի հիմնադրամի անվանումը:

7.3. Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ղեկավարները նշանակվում են հիմնադրամի տնօրենի կողմից ու գործում են նրա կողմից տրված լիազորագրի հիման վրա:

7.4. Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ենթակա են հաշվառման:

8. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Հիմնադրամը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

8.2. Հիմնադրամի սկզբնական միջոցներն են հիմնադրի կողմից ստեղծման պահին փոխանցված 1000 000 (մեկ միլիոն) դրամը:

8.3. Հիմնադրի և այլ անձանց կողմից հիմնադրամին հանձնած գույքը հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակով:

8.4. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

- 1) Հիմնադրի ներդրումը.
- 2) Ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները,
- 3) Դրամական մուտքերը պետական բյուջեից.
- 4) Դրամաշնորհները.
- 5) Հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.
- 6) Հանգանակությունները. միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից,
- 7) Օրենքով չարգելված այլ միջոցները:

8.5. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադրի, հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերի: Իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից որոշակի նպատակներով հիմնադրամին տրված նվիրաբերությունը կարող է օգտագործվել այլ նպատակներով, միայն նվիրաբերողի համաձայնությամբ: Հանգանակությունից ստացված միջոցները կարող են ծախսվել միայն այն նպատակով, որը հայտարարվել էր նախապես:

8.6. Հիմնադրամի ծախսերն են՝

- Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերը.
- Վարչակառավարչական ծախսերը:

8.7. Կանոնադրական նպատակների համար նախատեսված ծախսերը հիմնադրամի բյուջեում պետք է արտահայտված լինեն առանձին՝ ըստ նպատակների (ծրագրերի), օգտագործման եղանակների և (կամ) սուբյեկտների, որոնց միջև բաշխվելու են միջոցները: Այդ ծախսերում ներառվում են նաև հիմնադրամի գույքի պահպանման, ավելացման և վերանորոգման, ինչպես նաև կապի, կոմունալ-կենցաղային, էլեկտրաէներգիայի, շինարարության ծախսերը:

8.8. Վարչակառավարչական ծախսերն իրենց մեջ ներառում են հիմնադրամի կառավարման, հիմնադրամի աշխատողների աշխատավարձի, ինչպես նաև հիմնադրամի մարմինների

անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերը:

8.9. Վարչակառավարչական ծախսերի գումարի չափը սահմանվում է հիմնադրամի տարեկան ընդհանուր ծախսերի ոչ ավել, քան 30 տոկոսը:

8.10. Հիմնադրամի միջոցները ձևավորվում են կամավորության սկզբունքով: Հիմնադրամի միջոցների կազմավորմանը կարող են մասնակցություն բերել բոլոր այն ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք իրավմամբ շահագրգռված են հիմնադրամի նպատակների իրականացման խնդրով: Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իր տարեկան եկամուտներից կարող է միջոցներ հատկացնել հիմնադրամին: Հիմնադրամին հատկացումներ կարող են կատարվել նաև միանվագ նվիրատվության, ժառանգման, փոխանցումների և այլ ձևերով: Խոշոր միանվագ մուծումների դեպքում կարող են իրականացվել անվանական ծրագրեր:

8.11. Հիմնադրամն օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով, իր հայեցողությամբ տիրապետում, տնօրինում և օգտագործում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, այդ թվում իրավունք ունի իր գույքը, որպես սեփականություն, օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

8.12. ՀՀ տարածքում հիմնադրամի սեփականությունը գտնվում է ՀՀ պաշտպանության ներքո:

8.13. Հիմնադրամի սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում:

9. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

9.1. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն հիմնադրամի՝ այլ հիմնադրամին միացման կամ այլ հիմնադրամի հետ միաձուլման ձևով: Հիմնադրամի վերակազմակերպումը կատարվում է հիմնադրի որոշմամբ: Հիմնադրամի վերակազմակերպումը կարող է կատարվել նաև Խորհրդի որոշմամբ: Վերակազմակերպումն իրականացվում է Օրենքով սահմանված կարգով:

9.2. Հիմնադրամի լուծարումը հանգեցնում է դրա դադարմանը՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

9.3. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:

9.4. Հիմնադրամը լուծարվում է «Հիմնադրամների մասին» ՀՀ Օրենքով սահմանված կարգով:

9.5. Հիմնադրամը կարող է լուծարվել, եթե՝

- 1) Հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ,
- 2) Հնարավոր չէ հասնել հիմնադրամի նպատակներին և հնարավոր չէ կատարել այդ նպատակների անհրաժեշտ փոփոխություններ,
- 3) Հիմնադրամի կողմից իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներից շեղվելու դեպքում,
- 4) Օրենքով նախատեսված այլ դեպքերում:

9.6. Հիմնադրամի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, նրա գույքն ուղղվում է հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցվում է պետական բյուջե:

10. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

10.1. Կանոնադրությունում փոփոխություններ մտցնել կարող են ինչպես Հիմնադրամի հիմնադիրը, այնպես էլ Հիմնադրամի խորհուրդը՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Կանոնադրության այդ փոփոխությունները չեն կարող վերաբերվել Հիմնադրամի նպատակներին կամ շահառուներին:

10.2. Եթե կանոնադրության պահպանումը անփոփոխ ձևով կարող է առաջացնել այնպիսի հետևանքներ, որոնք հնարավոր չէր կանխատեսել Հիմնադրամն ստեղծելիս, կամ կանոնադրությունը չի փոփոխում նրա իրավասությունն ունեցող մարմինը, կամ փոփոխությունները պետք է վերաբերվեն Հիմնադրամի նպատակներին կամ շահառուներին, ապա փոփոխություններ կատարելու իրավունքն իրականացնում է դատարանը՝ Հիմնադրամի մարմինների կամ հիմնադրի կամ Օրենքի համաձայն ստեղծված հոգաբարձուների ժամանակավոր խորհրդի ղեկավարի հիման վրա:

[Handwritten signature]

IN THE SUPREME COURT OF THE UNITED STATES OF AMERICA
Docket No. 02-1000

101. The respondent's petition for a writ of habeas corpus is denied. The respondent's petition for a writ of certiorari is denied. The respondent's petition for a writ of mandamus is denied. The respondent's petition for a writ of prohibition is denied. The respondent's petition for a writ of quo warrantum is denied. The respondent's petition for a writ of ultra vires is denied. The respondent's petition for a writ of mandamus is denied. The respondent's petition for a writ of prohibition is denied. The respondent's petition for a writ of quo warrantum is denied. The respondent's petition for a writ of ultra vires is denied.

102. The respondent's petition for a writ of habeas corpus is denied. The respondent's petition for a writ of certiorari is denied. The respondent's petition for a writ of mandamus is denied. The respondent's petition for a writ of prohibition is denied. The respondent's petition for a writ of quo warrantum is denied. The respondent's petition for a writ of ultra vires is denied. The respondent's petition for a writ of mandamus is denied. The respondent's petition for a writ of prohibition is denied. The respondent's petition for a writ of quo warrantum is denied. The respondent's petition for a writ of ultra vires is denied.

[Handwritten signature]

